ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Կամո Մկրտչյան
Հաստատվել է համայնքի ավագանու
2013թ. մարտի 4-ին թիվ 3 նիստում

Մարտիրոս 2013 թ.

Բովանդակություն

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

Հավելված - 1. Մարկիրոսի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը

Հավելված - 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

Ինչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից, քննարկվում համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մարտիրոս գյուղը հիմնադրվել է 1283թ.-ին: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի տարածքում գտնվող խաչքարերը, Վիմափոր եկեղեցին և գյուղի կենտրոնում վերակառուցված եկեղեցին: Գյուղը գտնվում է Գոգի լեռան /3120 մ / ստորին լանջին: Գյուղի հարավ-արևելյան լեռնային տարածքը մոտ 6-7 կմ-ով սահմանակից է Նախիջևանին : 1970-ականներին, ելնելով սողանքային պայմաններից, գյուղը տեղափոխվել է 21 կմ հարավ-արևմուտք: 1985-1990 թթ. նոր գյուղի շինարարական աշխատանքները դադարեցվել են, այնպես որ համայնքն իր մեջ ներառում է երկու Մարտիրոս՝ Հին և Նոր: Չնայած 2000 թ. կատարված ջրահեռացման աշխատանքներին, Նոր Մարտիրոսում ևս առկա են սողանքային երևույթներ, որոնք էլ հանդիսանում են շենքերի մի մասի փլուզմանը, մի մասի էլ խիստ վթարայնությանը:
Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա, հեռավորությունը մարզկենտրոնից 30 կմ: Լեռնային աղբյուրները խմելու ջրով լիովին բավարարում են ոչ միայն Մարտիրոս գյուղին, այլև հարևան Սերս և Զառիթափ գյուղերը:
Գյուղի կլիման ձմռանը խստաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային և երաշտ տարիները, որից շատ են տուժում գյուղացիական տնտեսությունները, որովհետև բացի տնամերձներից մնացած հողատեսքերը անջրդի են ոռոգման համակարգի բացակայության պատճառով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղում ապրում են 740 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 42%-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ /0-6տ/	46
2. դպրոցական /6-17տ/	123
3. 18-62 տարեկան	376
4. թոշակառուներ	135
5. հաշմանդամներ	9
6. աշխատունակներ	334
7. գրանցված ընտրողների թիվը	454

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի / գյուղապետի / կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Մարտիրոսի գյուղապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը.

- Տեղակալ 1 դրույք
- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- Հաշվապահ – ֆինանսիստ 1 դրույք
- Մասնագետ 1 դրույք
- Համակարգչային օպերատոր 1 դրույք
- հավաքարար 0,45 դրույք

Համայնքի ենթակա կառույցներն են՝

Մշակույթի տուն

- Տնօրեն 1 դրույք

Գրադարան

- Գրադարանավար 0,7 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 8 հոգուց: Մարտիրոսի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

• Մշակույթի տուն	1 միավոր	անբավարար, վթարային
• Գրադարան	1	անբավարար, վթարային
• Բուժկետ	1	լավ
• Ջրմուղ ցանց	1	անբավարար
• Ոռոգման ցանց	1	անբավարար
• Մանկապարտեզի շենք	1	անբավարար
• Հնոցի / կաթսայատուն /	1	անբավարար

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ, հետևյալ կազմով/ տես հավելված 2/:

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի վիճակը վատթարացել է: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու պատճառով անմխիթար վիճակում են գյուղատնտեսական տեխնիկան և գործիքները: Խմելու ջրի ցանցի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստը կազմում է 45-50%:

Ճանապարհային ցանցը խիստ վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 10 կմ ճանապարհ ու փողոցներ: Շատ է վատթարացել թաղամասերի կոյուղու աշխատանքը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա երկու և մեկ ընտանիքների համար կառուցված ընդամենը 129 բնակարան 12 հազար քմ տարածքով: Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է 57, որը տարեց տարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային, խիստ վթարային և նույնիսկ փլուզված շենքեր:

Մանկապարտեզի շենքի վերանորոգման դեպքում հնարավոր կլինի մասնակիորեն լուծել բնակարանային խնդիրները՝ ապահովելով 3-4 ընտանիք:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

• Համայնքի վարչական տարածքը	5707,0 հա, որից
• Վարելահողեր	781,4 հա
• Խոտհարք	73 հա
• Արոտավայրեր	1302,6 հա
• Անօգտագործելի հողեր	3346,9 հա
• Ձորեր	127 հա
• Դաշտային ճանապարհներ	25 հա
• Այգիներ	2 հա
• Պատմամշակութային տարածքներ	2,7 հա
• Գերեզմանատուն	2հա
• Տնամերձ հողեր	35 հա
• Դպրոց	2 հա
• Հուշարձան	0,2 հա
• Գյուղամիջյան փողոցներ	5,2 հա
• Սեփականաշնորհված հողեր	558,6 հա, որտեղ՝
մեկ հողաբաժնի չափը	2,5 հա
• Պետական պահուստային հողեր	222,8 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակլիմայական պայմաններից կախված գյուղատնտեսության բնագավառում արտադրողականությունը շատ ցածր է: Արտադրանքն ունի բարձր ինքնարժեք: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտ տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:
Համայնքում զբաղվում են նաև այգեգործությամբ, սակայն արտադրանքի իրացման խնդրի առկայությունը գյուղատնտեսության այս ճյուղը դարձնում է ոչ եկամտեբեր:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, վերջին տարիներին մասնակի վերանորոգված, բարվոք վիճակում է , որտեղ սովորում են 123 աշակերտներ: Դպրոցն ունի 30 աշխատատեղ, մեկ ուսուցչին բաժին է հասնում 12 աշակերտ: Կրթության զարգացմանը կարող է շատ նպաստել համակարգչային տեխնիկայով դպրոցի աշակերտներին ապահովելու հանգամանքը:
Անմխիթար վիճակում է դպրոցի խմելու ջրի ներքին համակարգը, որն ունի անհապաղ վերանորոգման կարիք:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵԿՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1982 թ. կառուցված մշակույթի տուն, որտեղ տեղակայված է նաև գրադարանը, որն ունի 6248 անուն գիրք: Շենքը վատթար վիճակում է հայտնվել և կարող է դառնալ վթարային ու անշահագործելի: Այդ պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներ , կինո, թատրոն կազմակերպելու հնարավորություններից: Վերանորոգման դեպքում մեծ հաջողությունների կարող է հասնել մշակույթի տան ինքնագործ խումբը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է բարվոք վիճակում: Շենքը կառուցվել է 13 տարի առաջ, սակայն բացակայում են անհրաժեշտ գույքն ու սարքավորումները: բուժկետն ունի մեկ աշխատող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղում կա հինավուրց եկեղեցի, եթե այն վերանորոգվի , ապա կդառնա տեսարժան կառույց և կնպաստի զբոսաշրջության զարգացմանը
- համայնքն ունի ԲՈՒՀ-երի ավելի քան 65 շրջանավարտ, տարբեր մասնագիտությունների զծով, որոնք կարողանում են կազմակերպել

համայնքում կրթության, մատաղ սերնդի դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքները

- գյուղից մոտ 5 կմ վերև կա հանքավայր, որի շահագործումը կնպաստի համայնքի խնդիրների լուծման աշխատանքներին
- Գյուղում կա խորհրդավոր Վիմափոր եկեղեցին, գեղատեսիլ վայրեր, Վերակառուցված ՍԲ Վկայարան Երկրորդ Երուսաղեմ գեղեցիկ եկեղեցին, բազմաթիվ խաչքարեր, կոթողներ, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը համայնքում
- Համայնքը մարզկենտրոնին կապող ճանապարհը վերանորոգվել է և գտնվում է բավականին բարվոք վիճակում
- գյուղն ունի պահանջվող տարածքով արոտավայրեր, խոտհարքներ, պահուստային հողեր

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
- Խիստ վթարային շենքերի առկայությունը
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը
- Հեռուստակայանի անմխիթար աշխատանքը
- Խմելու և ոռոգման ջրի համակարգի մաշվածությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Մեծ ծավալով ջրի ամբարման հնարավորություն / ամբարտակի կառուցման դեպքում/
- Մշակույթի ինքնագործ խմբի գործունեություն
- Բարենպաստ պայմաններ մեղվաբուծության և այգեգործության զարգացման համար

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Սողանքային գոտիների առկայությունը, որը կարող է դառնալ դժբախտ դեպքերի պատճառ
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են ներկայացնում համայնքի բյուջեի կատարմանը
- Կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի համակարգ կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:
Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով և բացառել սուր վարակիչ հիվանդությունների տարածումը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՅԱՆՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1972 թ. : Ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 15.2 կմ :
Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս է եկել ավելի քան 45 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերն անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից և գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս հասցնում ջրագծին:
Ընդառաջելով բնակչության դիմումներին սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- երաշտ տարիներին բանջարբոստանային կուլտուրաները փրկել չորացումից
- կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90%-ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10%-ը՝ համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից
- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շինարարական կազմակերպությունը
- ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ
- համայնքի անդամների կողմից ձևավորել ԾԻԳ՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 100%-ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայիս 40-50%-ից հասնելով 5-10%-ի, կբարելավվեն գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական մոտավոր հաշվարկներով 2,8 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 30 միլիոն դրամ:

Ծրագիր 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 6,8 կմ, որից կենտրոնականը և 2 թաղամասերի ճանապարհները ասֆալտապատված են: Կենտրոնական ճանապարհը գտնվում է բարվոք վիճակում ու նորմալ շահագործվում է: Ներհամայնքային ճանապարհները սելավների և տեխնիկայի տեղաշարժերի հետևանքով քանդված են և դժվար անցանելի: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհը ասֆալտապատված է, բարեկարգ վիճակում է: Գյուղամիջյան 5 փողոցից ասֆալտապատ է միայն երկուսը: Բնակչության դիմումներին ընդառաջելով, սույն ծրագրով առաջարկվում է բարեկարգել գյուղի ներհամայնքային փողոցները՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հին ու նոր գյուղերը կապող ճանապարհին:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համարյա բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին
- վերանորոգել փողոցների ջրափոսերից քանդված հատվածները

Ծրագրի խնդիրները

- համագործակցել մարզպետարանի հետ՝ կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փոում, համայնքի փողոցներում
- աշխատանքները իրականացնել 2013-2016 թթ.

Ծրագիր 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է գազաֆիկացում: Ուստի համայնքի բնակչության դիմումներին ընդառաջելով, սույն ծրագրով առաջարկվում է գազաֆիկացնել համայնքը, որը Զառիթափ համայնքից մինչև Մարտիրոսի համայնքը կազմում է 6,2 կմ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակը՝

- ապահովել համայնքը գազով
- ապահովել բնակչության կուլտուր-կենցաղային պայմանները
- կասեցնել արտագաղթը
- ապահովել գազի մուտքը դեպի մյուս համայնքները՝ Սևրս, Բարձրունի, Խնձորուտ և նոր Ազնաբերդ

Ծրագրի խնդիրները

- համագործակցել դոնոր կազմակերպությունների և կառավարության հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- աշխատանքը իրականացնել 2013-2016 թթ. ընթացքում

Ծրագիր 4

ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում երիտասարդության համար ոչ մի կուլտուր-կենցաղային պայմաններ չկան, ուստի սույն ծրագրով առաջարկվում է երիտասարդության համար ստեղծել ազատ ժամանցի կենտրոն:

Ծրագրի հիմնական նպատակը՝

- երիտասարդների ազատ ժամանակի և ժամանցի ճիշտ կազմակերպում
- երիտասարդների արտագաղթի դադարեցում

Ծրագրի խնդիրները

- համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- աշխատանքը իրականացնել 2013թ. ընթացքում

Ծրագիր 5

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի սափականություն հանդիսացող մշակույթի տունը երկար տարիներ կապիտալ վերանորոգում չի կատարվել, ուստի քայքայման եզրին է:
Սույն ծրագրով առաջարկվում է համայնքի բնակրության համար վերականգնել մշակույթի օջախը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակը՝

- համայնքի բնակիչների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավում
- համայնքի բնակիչների արտագաղթի դադարեցումը

Ծրագրի խնդիրները

- համագործակցել դոնոր կազմակերպությունների և կառավարության հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- աշխատանքը իրականացնել 2013-2016 թթ. ընթացքում

Ծրագիր 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում կոյուղին կառուցվել է 1975 թ., ուստի պիտանի չէ շահագործման համար: Ամբողջ կեղտաջրերը դուրս են գալիս համայնքի փողոցները, առաջացնում խիստ հակասանիտարական իրավիճակ և ըստ այդմ էլ նպաստում համայնքում առկա սողանքային երևույթների ակտիվացմանը: Սույն ծրագրով առաջարկվում է վերականգնել և վերանորոգել համայնքի կոյուղու ցանցը, որպեսզի կանխվի նաև համաճարակային հիվանդությունների առաջացումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակը՝

- համայնքի բնակիչներին պաշտպանել համաճարակային հիվանդություններից
- համայնքի շենքերի և շինությունների պաշտպանում վթարայնությունից

Ծրագրի խնդիրները

- համագործակցել կառավարության հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- աշխատանքը իրականացնել 2013-2016 թթ. ընթացքում

Ծրագիր 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում 1990 թ. հետո գիշերային լուսավորության ցանց չի գործում: Ուստի համայնքի բնակչությունը գիշերային ժամերին չի կարողանում այցելել բարեկամներին և հարևաններին :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակը՝

- համայնքի բնակիչների կուլտու-կենցաղային պայմանների բարելավում
- գիշերային ժամերին զերծ մնալ անցնկալի երևույթներից

Ծրագրի խնդիրները

- համագործակցել դոնոր կազմակերպությունների և կառավարության հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- աշխատանքը իրականացնել 2013թ. ընթացքում

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Վայոց Ձորի մարզի Մարտիրոս համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

	Եկամտի տեսակը	2013 թ. Փաստ	2014թ. Փաստ	2015թ. նախատեսված	2016թ. կանխատեսված
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	3578.0	3610.0	4270.0	5005.0
	Եկամուտներ	2378.0	2410.0	2670.0	3005.0
	Ընթացիկ եկամուտներ	2378.0	2410.0	2670.0	3005.0
	Հարկային եկամուտներ	1950.0	1971.0	2200.0	2540.0
1	Հողի հարկ	1700.0	1700.0	1700.0	1700.0
2	Գույքահարկ	400.0	400.0	450.0	500.0
3	Եկամտահարկ				
4	Այլ հարկ. եկամուտներ				
	Տուրքեր	28.0	28.0	50.0	65.0
1	Պետական տուրքեր				
2	Տեղական տուրքեր	28.0	28.0	50.0	65.0
	Ոչ հարկային եկամուտներ	750.0	760.0	770.0	780.0
	Այլ ոչ հարկ. եկամուտներ				
1	Պաշտոնական տրանսֆերներ		1200.0	1600.0	2000.0
2	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերներ		1200.0	1600.0	2000.0
	Պաշտոնական կապիտալ տրանսֆերներ				

5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ցուցանիշներ	Չափի միավ.	2012թ. Փաստ	2013թ. Փաստ	2014թ. Փաստ	2015թ. Փաստ	2016թ. Կանխ.
	1	2	3	4	5	6	7
1	Համայնքի տարածք	հա	5707	5707	5707	5707	5707
2	Բնակչության թիվը	մարդ	717	731	735	740	750
3	Ծնունդը	մարդ	8	11	13	10	15
4	Մահացություն	մարդ					
5	Աշխ. ռեսուրսները այդ թվում Զբաղվ. ըստ տնտ. ճյուղերի	մարդ	218	230	233	243	250
6	Գործազրկության մակարդակը	%	50	50	50	45	40
7	Առևտրի և հաս. սննդի օբյեկտներ	հատ	2	2	2	2	2
8	Պահուստային հողեր	հա	222.8	222.8	222.8	222.8	222.8
9	Պահուստ. հողերի օգտ. մակարդակը	հա	35	35	35	35	25
10	Խմելու ջրի ներհամ. ցանցի երկարությունը	կմ	5	5	5	5	5
11	Ոռոգման ջրի ներհամ. ցանցի երկարությունը	կմ	9	9	9	9	9
12	Ոռոգման համակ. ընդգրկ. հողերը	հա	40	40	60	60	60
13	Ներհամայնք. փողոց. և ճանապարհ. երկարութ.	կմ	5	5	5	5	5
14	Չբարեկարգված փողոցներ	կմ	2.8	2.8	2.8	2.8	1.9
15	Մասնավոր բնակֆոնդ	հազ.քմ	149/10.4	149/10.4	149/10.4	149/10.4	149/10.4
16	Բնակ. կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	37	47	49	50	52
17	Մեկ շնչին ընկնող ջրասպառումը	լ/օր	75	75	75	75	75
18	Ջրի կորուստներ ցանցում	%	45	45	45	45	25
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	117	123	125	128	130
20	Երեխաների թիվը նախակրթարանում	մարդ	16	18	20	20	22
21	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	9	9	9	9	9

2013-2016 թ.թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՓԱԹԵԹ

Հ/Հ	Ծրագրի միջոցառման աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆին. միջոցների անհրաժեշտ քանակը	Ծավալը	Ֆինանսական աղբյուրները			2013թ. Ծավալ Ֆին. Միջ.	2014թ. Ծավալ Ֆին. Միջ.	2015թ. Ծավալ Ֆին. Միջ.	Պատասխանատու	Ծանոթություն
					Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպ.						
1	Խմելու ջրի ցանցի վերանորոգում	Կմ	2.8	12000	12000	10800	5000	7000			Համայնքի ղեկավար	
2	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	Կմ	6.8								Համայնքի ղեկավար	
3	Համայնքի գազաֆիկացում	Կմ	8	36000							Համայնքի ղեկավար	
4	Ռեսուրս կենտրոնի հիմնադրում			4000		4000		4000			Համայնքի ղեկավար	
5	Մշակույթի տան կապիտալ նորոգում			33000				13000	10000	10000	Համայնքի ղեկավար	
6	Կոյուղու վերանորոգում	Կմ	8	13000				5000	4000	4000	Համայնքի ղեկավար	
7	Գիշերային լուսավորություն			3500				3500			Համայնքի ղեկավար	

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 210
   Ա. Անհատական տնտեսություններ 201
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսականիների արտադրությունը ց.
   Ա. ցորեն 800
   Բ. գարի 30
   Գ. կարտոֆիլ 1500
   Դ. կաղամբ 120
   Ե. բանջար-բոստանային կուլտ. 800
   Զ. կաթ 3000
   Է. միս 800
   Ը. բուրդ 10
   Թ. ձու 80000
   Ժ. մեղր 30
   Ի. միրգ 1200
3. Ցանքատարածություններ, հա
   Ա. հացահատիկ 50
   Բ. կարտոֆիլ 10
   Գ. բանջար-բոստանային կուլտ. 4
   Դ. կաղամբ 0,4
   Ե. առվույտ 75
   Զ. կորնգան 15
4. Անասնաբլխաքանակը, հատ
   Ա. խոշոր եղջերավոր 671
      այդ թվում կովեր 287
   Բ. մանր եղջերավոր 601
      այդ թվում մայրեր 506
   Գ. խոզեր 62
      այդ թվում մայրեր 16
   Դ. թռչուններ 1169
      այդ թվում հավեր 898
   Ե. մեղվաընտանիքներ 395
5. Գյուղմեքենաների և գործիքների քանակը, հատ

Մասնավոր սեփականություն	
թրթուրավոր տրակտորներ	6
անվավոր տրակտորներ	19
հացահատիկ. կոմբայն	1
բեռնատար/ տարբեր մակնիշի /	18
տրակտորի կցասայլակ	15
գութաններ	4
կուլտիվատորներ	1
շարքացաններ	1
խոտ հակավորող մեքենաներ	6

Հավելված 1

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՅԱՍԱՏԱՆՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՅՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հավելված 2

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Մշակույթի տուն	1
2. Գրադարան	1
3. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	1
4. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ	1
5. Ներհամայնքային փողոցներ	15 կմ
6. Ներհամայնքային կամուրջներ	1
7. Հուշարձան	1
8. Գերեզմանատուն	1